Կ Ա Ր Ծ Ի Ք

Հայարփի Գագիկի Սահակյանի

«Սուբյեկտի հիմնահարցը Միշել Ֆուկոյի փիլիսոփայության մեջ»

ատենախոսության մասին

Գրախոսվող ատենախոսությունը նվիրված է ֆրանսիացի հոգեբույժ, փիլիսոփա, սոցիոլոգ, մշակույթի տեսաբան Միշել Ֆուկոյի (1926–1984) փիլիսոփայական հայացքներին՝ նվիրված մարդկային համակեցության սոցիալ-փիլիսոփայական հիմնախնդիրների, անհատի և հանրային հաստատությունների փոխհարաբերությունների, իշխանության և ազատության, բարոյականության, իշխանական համակարգի գործառության, «գիտելիք–լեզու», «իմացություն–իշխանություն» հարաբերակցության վերլուծությանը: Անցյալ դարի վերջին փիլիսոփան լայն ճանաչում էր ստացել: Մեր օրերում արդեն դժվար է, իհարկե, անվերապահորեն հաստատել, թե նրա դատողությունները հույժ արդիական են և գործադրելի. ավելին՝ նրա առաջարկած որոշ հասկացություններ դուրս են եկել շրջանառությունից: Այդուհանդերձ, ողջունելի է, անտարակույս, ատենախոսի նպատակադրումը և գովելի է համարձակությունը կենտրոնանալու ֆրանսիացի փիլիսոփայի առաջարկած «սուբյեկտ» հասկացության ըմբռնման, նրա մյուս դիտարկումների և դրանց տարատեսակ մեկնաբանությունների շուրջ: Առավել ևս, որ ատենախոսը կատարել է հետազոտական հսկայական աշխատանք. ներառել է Ֆուկոյի տեսական գրեթե ամբողջ ժառանգությունը, դիտարկել է նրա առանցքային հարցադրումների աստիճանական զարգացումը: Դրվատանքի է արժանի նաև հարակից գրականության ներառումը. Միշել Ֆուկոյի մտքերի վերլուծության ընթացքում ատենախոսը ներգրավել է պատկառելի թվով փիլիսոփաների և սոցիոլոգների, այդ կերպ հայ ընթերցողներին ծանոթացնելով Էրվինգ Գաֆմենի, Ջորջո Ագամբենի, Նիքոլաս Ռոուզի, Միտչել Դինի, Ուլրիխ Բեքի, Ռոզի Բրեյդոտտիի, Կասպար Վիլադսենի և այլոց արժեքավոր և ուսանելի հրապարակումների հետ՝ խոր և պատշաճ գնահատումներով հանդերձ (ուստի և ցանկալի է, որ դրանք չմնան լոկ ատենախոսության տեքստի շրջանակում, այլ գիտական շրջանառության մեջ դրվեն մենագրության կամ ձեռնարկի ձևով):

Ատենախոսական **աշխատանքը բաղկացած է** ներածությունից, երկու գլխից, եզրակացությունից և գրականության ցանկից: Առաջին գլուխն անվանված է «Սուբյեկտն իշխանական–դիսկուրսիվ հարաբերությունների համատեքստում», երկրորդը՝ «Սուբյեկտի գործունեությունը. դիմադրություն և ինքնակերտում»: Ըստ նման աշխատանքներին ներկայացվող պահանջների՝ ներածության մեջ (էջ 3–14) հիմնավորված է թեմայի արդիականությունը, բնութագրված է գիտատեսական մշակվածության աստիճանը, շարադրված են հետազոտության նպատակն ու խնդիրները, մեթոդաբանական հիմքերը, կա-

տարված աշխատանքի տեսական և գործնական նշանակությունը, ապա հանգամանորեն ձևակերպված են գիտական նորույթը և հրապարակային պաշտպանության ներկայացված դրույթները: Եզրակացության մեջ (էջ 130–133) հակիրճ ընդհանրացվել է ուսումնասիրության արդյունքը, ամփոփ ներկայացվել ատենախոսի իմացական ներդրումը տվյալ թեմայի ասպարեզում: Գրականության ցանկը (էջ 134–144) ներառում է 139 գիտական հրապարակում:

Ընդհանուր առմամբ՝ Հայարփի Սահակյանի ներկայացրած «Սուբյեկտի հիմնահարցը Միշել Ֆուկոյի փիլիսոփայության մեջ» ատենախոսությունը թե՛ բովանդակային վերլուծության առումով, թե՛ մասնագիտական գրականության ընդգրկման և հանգամանալի վերլուծության, թե՛ աշխատանքի արդյունքների մատուցման կերպի առումով միանգամայն բավարարում է հայցվող գիտական աստիճանի շնորհմանը:

Այդուհանդերձ, ատենախոսական աշխատանքը հարուցում է որոշ հարցեր, որոնց պատասխանը հրապարակային պաշտպանության ընթացքում լրացուցիչ հիմք կտա վերջնական գնահատականի համար:

1. Ըստ իս, **ընտրված թեման պահանջում էր, ամենից առաջ, թեկուզ հակիրճ բնութագրել Միշել Ֆուկոյի փիլիսոփայական հայացքները**, վատ չէր լինի նաև թեթևակի անդրադառնալ նրա կենսագրությանը և հետաքրքրություններին (նորություն չէ՝ դա պարտադիր է փիլիսոփային ճիշտ ըմբռնելու համար): Ատենախոսը պիտի հիմնավորեր, թե ինչո՞ւ է ֆրանսիացի փիլիսոփայի բովանդակ ստեղծագործության մեջ ինքն ընտրել հատկապես «**սուբյեկտի հիմնահարցի**» պարզաբանման թեման: Մինչդեռ ատենախոսն սկսում է «սուբյեկտ» հասկացությունից, դրա ըմբռնման կարևորությունից, տարբեր կարծիքների քննարկումից՝ ակամա ինչ-որ չափով, նյութի շարադրանքի տրամաբանությամբ, հետին պլան մղելով Ֆուկոյին (թեպետ այնուհետև նույնական շարադրում է Ֆուկոյի մտքերը, նույնիսկ որոշ չափով ի վնաս սեփական մեկնաբանության և գնահատականի. այն տպավորությունն է, որ նրան **որոշակիորեն կաշկանդել** է «սուբյեկտի հիմնահարցի» ձևակերպումը): Իհարկե, կամքն ատենախոսինն է, սակայն այդպես, կարծում եմ, թերի է մնացել բուն թեմայի հիմնավորվածությունը:

2. Կուզենայի, այդուհանդերձ, պարզել ատենախոսի իրական վերաբերմունքը, ուստի **առաջարկում եմ մեկնաբանել Միշել Ֆուկոյի առանցքային հարցադրումներից երկուսը**: Նախ՝ հետևյալ տարօրինակ պնդումը: 18-րդ դարը, ասում է Մ. Ֆուկոն «Բառեր և իրեր» գրքի տասներորդ գլխում, «մարդ» կամ «մարդկային բնույթ» անվամբ հումանիտար գիտություններին (les sciences humaines) է հանձնել արտաքուստ թեթևակի ուրվագծված, բայց ներքուստ տակավին դատարկ մի տարածք, որը նրանք պարտավոր էին ընդգրկել և հետազոտել: Այդ հումանիտար գիտություններին բաժին ընկած իմացաբանական դաշտը (le champ épistémologique) նախապես նրանց տրված չէ, «քանի որ ոչ մի փիլիսոփայություն, քաղաքական կամ բարոյական բնույթի ոչ մի կար-

ծիք, արդեն գոյություն ունեցող էմպիրիկ գիտություններից ոչ մեկը, մարդկային մարմնի ոչ մի դիտարկում, զգացմունքների, երևակայության կամ կրքերի ոչ մի հետազոտություն ո՛չ 17-րդ, ո՛չ 18-րդ դարում ոչ մի անգամ չեն հանդիպել այնպիսի մի բան, ինչպիսին մարդն է (quelque chose comme l'homme), որովհետև մարդը գոյություն էլ չի ունեցել (ինչպես գոյություն չեն ունեցել կյանքը, լեզուն և աշխատանքը)»*:

Զարմանալի է, որ նույն վստահությամբ (ակամա անվերապահ ոչնչապաշտություն հիշեցնող) Ֆուկոն չի հավելում-վավերացնում չգոյությունը պետության, գրականության, ընտանիքի, պատերազմի, սիրո, գիտության, գյուղատնտեսության և այլն, և այլն: Ֆուկոն ինքը, իհարկե, պարզաբանում է ասածները, օրինակ՝ թե «մարդը» բնավ էլ պատմականորեն ձևավորված մարդը չէ, այլ որն ունակ է դառնում ինքնանդրադարձի, նմանապես՝ լեզուն էլ դառնում է ներփակ համակարգ և այլն: Բայց մի՞թե, հիրավի, նախընթաց մարդկային միտքը, մինչ 19-րդ դարի սկիզբը, մինչև Ֆուկոյի ի հայտ գալը, մարդու մասին խորհողները դա չեն արտացոլել. մի կողմ թողած փիլիսոփաների շարանը, ինչի՞ մասին են գրել Դանթեի և Շեքսպիրի պես տիտանները:

Արդ, ցանկալի է իմանալ ատենախոսի մեկնաբանությունը այսօրինակ կտրուկ և անվերապահ հայտարարությունների մասին:

Երկրորդ մեկնաբանության առաջարկս վերաբերում է Միշել Ֆուկոյի վերաբերմունքին **հումանիտար գիտությունների** հանդեպ: Ֆրանսիացի փիլիսոփան դրանց մեծ վերապահումով է անվանում «գիտություն», հայտարարում է թե դա չափազանց խիստ բառ է, թերևս, առավել չեզոքության համար, ասենք, օրինակ՝ «խոսույթի հավաքածու» (ce mot même est peut-être trop fort: disons, pour être plus neutre encore, à cet ensemble de discours)**: Այս գիտությունների մեթոդաբանությունը նույնիսկ վնասակար, վտանգավոր է համարվում ինչպես բնական գիտությունների, այնպես էլ փիլիսոփայության համար, սակայն հատկապես մարդաբանությունն է արժանացել անողոք դատափետման: Ֆուկոն ակնարկում է «մարդաբանական քնի» մասին (le sommeil anthropologique), ասում, թե «ժամանակակից փիլիսոփայության մարդաբանական կառուցվածքը հանգեցրել է դոգմատիզմի կրկնապատկման» (la configuration anthropologique de la philosophie moderne consiste à dédoubler le dogmatisme), հորդորում է «արմատախիլ անել մարդաբանությունը» (déracinement de l'Anthropologie) և դրվատում է Նիցշեին՝ որպես դա անող առաջիններից մեկի: Առաջարկում է «մարդու արտաքսումը»՝ որպես վերադարձ փիլիսոփայությանը. «Մեր օրերում խորհրդածել հնարավոր է միայն մարդուց պարպված դատարկության մեջ» (De nos jours on ne peut plus penser que dans le vide de l'homme disparu)***:

---

* Les Mots et les Choses, p. 273, Слова и вещи, с. 364, The Order of Things, p. 344.
** Les Mots et les Choses, p. 364.
*** Les Mots et les Choses, p. 271–272, 272.

Արդյոք շատ անվերապահ չի՞ ասված: Եթե «մարդու» փոխարեն գործածենք «սուբյեկտ» եզրույթը, ապա այդ կերպ ապահովո՞ւմ ենք ոչ-մարդաբանական մարդաբանության հավատո հանգանակը:

3. Ատենախոսության **հասկացական գործիքակազմը** միանգամայն համոզիչ է, հետևողական և տրամաբանված: Միշել Ֆուկոյի առաջարկած և այլ հեղինակների գործածած հասկացությունները մեկնաբանված են հստակորեն և հասկանալի, ցույց է տրված դրանց իմացաբանական արժեքը մարդու սոցիալական կեցության հիմնախնդիրները վերլուծելու համար:

Այդուհանդերձ, որոշակի շփոթ է գոյացել «**կառավարում**» և «**կառավարելիություն**» հասկացությունների գործածությամբ: Վերջինս ատենախոսը փոխառում է Ֆուկոյի «gouvernmentalité» բառից՝ թարգմանելով «կառավարելիություն»: Մինչդեռ ֆրանսերենում դա «gouvernable» բառն է: Կառավարման տեսության մեջ ընդունված է «կառավարելիության նորմ» հասկացությունը որպես կառավարման ընդգրկման տիրույթ. դա մեկ կառավարչին բաժին ընկնող առավելագույն քանակն է, որոնց նա կարող է ղեկավարել անմիջապես և արդյունավետորեն: Համագործածական լեզվում ևս «կառավարելիություն» նշանակում է «կառավարելի լինելու» հատկություն: Այդ հասկացությունների շփոթն է, հավանաբար, հանգեցրել, օրինակ, հետևյալ տարօրինակ եզրակացությանը. «Սուբյեկտը չի դառնում կառավարելի իր էության կամ ներքին հատկությունների շնորհիվ, այլ ձևավորվում է հարաբերությունների այնպիսի տիրույթում, որտեղ վարքը կարող է ուղղորդվել՝ առանց այն ամբողջապես կասեցնելու կամ վերացնելու: Կառավարումն իրականացվում է ոչ թե սուբյեկտի ոչնչացման, այլ նրա գործունակության կազմակերպման միջոցով» (էջ 37): Հատկապես այս վերջին պնդումը կարոտ է ատենախոսի բացատրության. այդ ո՞վ է հակառակը հիմնավորում:

Ինչ վերաբերում է Ֆուկոյի «**gouvernmentalité**» բառի նշանակությանը, ապա եղած մեկնաբանությունները, փաստորեն, համակարծիք չեն, ուստի կարելի էր, կարծում եմ, կողմնորոշվել բառաձևի համաբանությամբ: Համագործածական ֆրանսերենում կա «communicabilité» բառը, որը ռուսներն ուղղակի պատճենել են՝ «коммуникабельность», այսինքն՝ դրանով նշում ենք մարդկանց՝ հաղորդակցվելու ունակությունը, կարողությունը կամ հմտությունը: Հայերեն համարժեքը չքնաղ մի բառ է «հաղորդունակություն»: Ահավասիկ գուցե «gouvernmentalité»-ն թարգմանենք (առայժմ) երկու բառով՝ «կառավարելու ունակություն»: «Կառավարելիությունը» կմնա որպես համակարգի բնութագիրը, իսկ «**կառավարելու ունակությունը**» կարտահայտի կառավարող սուբյեկտի՝ կառավարող լինելու հատկանիշը:

Պարզության համար՝ խիստ հակիրճ՝ **«Կառավարում» երևույթի մասին** (համենայն դեպս): Կառավարման էության դասական սահմանումն է՝ «գործի կատարում այլոց միջոցով» (getting thing done by other people): Կառավարումը սուբյեկտ-օբյեկտային փոխհարաբերության տեսակ է. կառավարողը՝ կառավարչական աշխատանքի սուբյեկտը, իր նպատակադրումն իրականացնում է

կառավարվողի միջոցով (կազմակերպում է վերջինիս վարքը՝ շահագրգռում, խթանում, վերահսկում և այլն), կառավարվողը դառնում է արդեն բուն կատարողական աշխատանքի սուբյեկտը: Երկու կողմերի համադրմամբ՝ գոյանում է կառավարման հինգ համակարգ՝ «տեխնոկրատականից» (որի դեպքում կառավարողը կառավարվողին ընկալում է լոկ որպես «խոսող գործիք») մինչև «մասնակցային» (կողմերի ընդհանուր նպատակադրում) և «իդեալական» (կառավարումը վերածվում է ինքնակառավարման):

Ըստ իս, ճիշտ կլիներ, եթե ատենախոսը կառավարաբանության հիմունքներից շարժվեր դեպի Ֆուկոյի դատողությունների վերլուծությունը. խառնաշփոթ չէր առաջանա: Առավել ևս սա վերաբերում է իշխանության էության, տեսակների և դրսևորումների վերաբերյալ ֆրանսիացի փիլիսոփայի հայացքներին: Իրոք, «**իշխանության**» սահմանումը շատ անհաջող է. «Իշխանությունն ընկալվում է որպես հարաբերությունների բազմաշերտ դաշտ, որտեղ ձևավորվում են նորմեր, տարբերակումներ, տեսանելիության գործակարգեր (ռեժիմներ) և վարքագծի ուղղորդման տրամաբանություններ» (էջ 15): Սա զուտ նկարագրական սահմանում է, որ բնավ չի արտահայտում իշխանության էութենական բնութագիրը: Ատենախոսը, ըստ իս, պարտավոր էր կողմնորոշվել իշխանության դասական սահմանմամբ. ըստ **Մաքս Վեբերի**՝ իշխանությունը տվյալ սուբյեկտի (անհատ, խումբ և այլն) հնարավորությունն է տվյալ հանրույթի (ընտանիք, խումբ, կազմակերպություն, պետություն) իրականացնելու սեփական կամքը: Գուցե այս պարագայում ատենախոսը չէր անի անհարկի եզրակացություններ, օրինակ՝ թե «իշխանությունը չի պատկանում որևէ մեկին որպես ունեցվածք, այլ գործարկվում է հարաբերությունների դաշտում» (էջ 39). վերստին՝ անհասկանալի է, թե այդ ո՞վ է հակառակը պնդում: Անհասկանալի է նաև «ազատություն» և «դիմադրություն» եզրույթների ներմուծումը. համենայն դեպս՝ դրանցից ոչ մեկը չի կարող լինել «իշխանության ներքին գործառույթ» (էջ 78–84):

4. Ատենախոսության լեզվի մասին: Ներածության մեջ ատենախոսը դրվատելի նպատակադրում-ցանկություն է արտահայտել հարստացնելու հայալեզու փիլիսոփայական գրականությունը, ընդլայնելու հայալզու փիլիսոփայական դաշտի վերլուծական հնարավորությունները (էջ 10, 11, 12): Այդ խոստումը, ցավոք, թերի է կատարվել:

-Թեպետ կառավարման համակարգերի գործառությունը նշանակելու համար օտարամուտ «ռեժիմ»-ի փոխարեն առաջարկվել է հայերեն բավական հաջող «**գործակարգ**» բառը, սակայն ատենախոսության հետագա շարադրանքի ընթացքում ատենախոսն անտեսել է իր իսկ առաջարկը և հիմնականում օտարն է գործածում՝ «կարգավորող ռեժիմ», «մոդուլյար ռեժիմ», «աֆեկտիվ ռեժիմ» և այլ:

- Քիչ չեն հասկացությունները, որոնց հայերեն համարժեքը վաղուց գործածվում է, բայց **օտարի գերադասումը** ծնունդ է տվել անհաջող արտահայտությունների՝ «կառավարման ռացիոնալություններ», «ինստիտուցիոնալ ճա-

նաչելիություն», «հումանիստական ռոմանտիզացում», «ինդիվիդուալացված կառավարչի կերպար», «ինստիտուցիոնալ կոնֆիգուրացիաներ», «պատասխանատվության ինդիվիդուալացում», ««ռիսկ-ռեֆլեքսիա» զուգակցում», «սուբյեկտայնացման ռեֆլեքսիվ հարթություն», «հավանականությունների մանիպուլյացիա», «ալգորիթմիկ մոդուլյացիաների հարթություն», «ինստիտուցիոնալիզացված ինքնակարգավորում» և այլն:

-Հայերեն լեզվամտածողությամբ՝ դժվար է հաշտվել «ինքնամոդուլյացիա», «ինքնաձևավորման տեխնոլոգիաներ», «ինքնակերտման տեխնոլոգիա» և հատկապես «**ինքնատեխնոլոգիա**» եզրույթների հետ (նույնիսկ եթե վերջինիս համար վկայակոչված է Ֆուկոն):

-Ինչպես հայտնի է, մարդկանց միջև լինում են ոչ թե «հարաբերություններ», այլ «**փոխհարաբերություններ**»:

-Ատենախոսը (էջ 28) առաջարկում է Ֆուկոյի «archaelogy» եզրույթի համար գործածել «**հնէաբանություն**» բառը, ոչ թե «հնագիտություն», ինչպես արդեն կայունացել է: Այդուհանդերձ, սա սխալ առաջարկ է, քանի որ «հնէաբանությունը» «paleontology»-ին է՝ գիտություն հնագույն էակների մասին. ավելի լավ է թողնել «հնագիտությունը» (մինչև գտնվի ավելի հաջողը):

-Համոզիչ չէ, պարզապես լեզվականորեն սխալ է կազմված «**պատասխանատու փոխկախյալ սուբեկտ**» նորաբանությունը: Ատենախոսի միտքը հասկանալի է և լիովին հիմնավոր: «Փոխ» բաղադրիչն ամեն մի բառակապակցության մեջ ենթադրում է համատեղություն, այլ կերպ ասած՝ երկու սուբյեկտի միջև կապի արձանագրում, այսինքն՝ գոյականը պահանջում է հոգնակի թվի գործածություն: Այս պարագայում, կարծում եմ, առհասարակ կարելի էր հրաժարվել «պատասխանատու» բնութագրումից և գործածել «**փոխկախյալ սուբյեկտներ**» բառակապակցությունը, քանի որ «պատասխանատվության» երևույթն արդեն ներառված է մարդկանց՝ միմյանց փոխադարձաբար կախյալ լինելու իրողության մեջ:

5. Ատենախոսության թեման, եթե կողմնորոշվենք կատարված աշխատանքի բովանդակությունից, ցանկալի կլիներ անվանել, «**Մարդու սոցիալական կեցության հիմնախնդիրները Միշել Ֆուկոյի փիլիսոփայության մեջ**»: Դարձյալ՝ վճռորոշը, իհարկե, ատենախոսի կամքն է: Սակայն առաջարկված ձևակերպման պարագայում նա, թերևս, հարկադրված չէր լինի ներածությունը սկսել հետևյալ վիճարկելի տողով. «Սուբյեկտի ձևավորման հիմնահարցը դարեր շարունակ փիլիսոփայական մտքի առանցքային թեմաներից է եղել: Դասական փիլիսոփայության շրջանակում սուբյեկտը դիտարկվում էր որպես ինքնաբավ, ինքնագիտակցությամբ օժտված բանական էություն» (էջ 3): Մի՞թե այդպես է: Մի՞թե մա՛րդը չի եղել փիլիսոփայական խորհրդածությունների կենտրոնում, իսկ «սուբյեկտ» հասկացությունը (ոչ թե բառը) ավելի ուշ չի՞ առաջացել, և, ի դեպ, «օբյեկտ» հասկացության պարտադիր հարաբերակցությամբ:

Ատենախոսը փորձում է համոզել, թե մարդը (անհատը) և «սուբյեկտը», մարդկայինը (անձնայինը) և «սուբյեկտայինը» տարբեր են, օրինակ՝ «Այս հիմնաքարային իմաստով՝ սուբյեկտը չի համընկնում մարդու հետ: Մարդը կարող է լինել ճանաչողության մասնակից, մինչդեռ սուբյեկտն այն դիրքն է, որի շնորհիվ ճանաչողությունը կարող է դրսևորվել որպես ձևական ամբողջություն» (էջ 20):

Մինչդեռ ատենախոսության ամբողջ շարադրանքի ընթացքում «սուբյեկտ», «սուբյեկտայնություն», նաև «մարմին», «մարմնական» բառերի գործածությամբ այս կամ այն խոսքաշարի միտքը լիովին հասկանալի է դառնում, եթե դրանց փոխարեն կարդում ենք «մարդ», «անհատ» և «անհատական» բառերը: Օրինակ՝ «Նույն նորմատիվ կապը, որը սուբյեկտին թույլ է տալիս ձևավորվել որպես «ես», միաժամանակ ամրագրում է նրա կախվածությունն այն հարաբերություններից, որոնց միջոցով այդ «ես»-ը հնարավոր է դառնում» (էջ 80): Կամ՝ «Այսպիսով՝ կարգապահական իշխանությունը պատկերանում է որպես սուբյեկտի կերտման այնպիսի ռեժիմ, որը գործում է անհատական մարմնի մակարդակում՝ ձևավորելով կառավարելի գործունակություն տարածության, ժամանակի, նորմալացման և տեսանելիության համակցված մեխանիզմների միջոցով» (էջ 50): Կամ էլ՝ «Իշխանությունը չի «հարվածում» մարմնին, այլ կազմակերպում է այն՝ դարձնելով վարքագիծը կայուն, կրկնելի և կանխատեսելի» (էջ 42):

Արված բոլոր դիտողությունները վերաբերում են սույն թեմայի հնարավոր հետագա, ավելի խոր վերլուծությանը, ուստի սկզբունքորեն չեն նսեմացնում գրախոսվող աշխատանքի տեսական արժեքը, ատենախոսի կատարած ամբողջական հետազոտությունը և հրապարակային պաշտպանության ներկայացված նորույթը:

Այնպես որ, ինչպես արդեն ասվեց, **Հայարփի Սահակյանի «Սուբյեկտի հիմնահարցը Միշել Ֆուկոյի փիլիսոփայության մեջ» ատենախոսությունը բովանդակային վերլուծությամբ, մասնագիտական գրականության ընդգրկմամբ և հանգամանալի վերլուծությամբ, աշխատանքի արդյունքների առումով միանգամայն բավարարում է հայցվող գիտական աստիճանի շնորհմանը**: Ուստի վստահաբար երաշխավորում եմ 013 մասնագիտական խորհրդի անդամներին հայցորդին շնորհել իրեն լիովին արժանի գիտական աստիճանը:

Պաշտոնական ընդդիմախոս՝ Վալերի Միրզոյան
փիլ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
էլ. փոստ **valerimirzoyan@yahoo.de**
հեռախոսահամար՝ **099339549**

26 մայիսի 2026 թ.

Պրոֆեսոր Վ. Միրզոյանի ստորագրությունը հաստատում է
013 մասնագիտական խորհրդի գիտ. քարտուղար Հ. Դարբինյան